ԵՂԵՐԵՐԳ ՑԱՂԱԳՍ ՄԱՀՈՒԱՆ
ՍԸՐ ԲԷԴԷՐ ԲԱՐՔԷՐԻ*

Ա.

Կան արտասուք ամէն մեռնողնե-բու համար, և սուգ ամէնախոնարհ գերեզմանին վրայ. բայց երբ արիք կը մեռնին, ամբողջ ազգեր եղերական ողբեր կը նուագեն, և ոգին յաղ-թութեան կ'արտասուէ։

Բ.

Նոցա համար՝ վշտաց ամենատուրբ հառաչք ովկիանու յուզեալ ծոցը կը պատռեն կ'անցնին։ Ի զուր ոսկերա-տիք նոցա կը մնան անթաղ. երկիր համբրէն նոցա շիրիմ կը լինի։

Գ.

Պատմութեան ամէն էջերու մէջ յիշատակարան մը, աշխարհի ա-մէն լեզուներու մէջ տապանագիր մը կը գտնեն։ Յամն ներկայ և դարն ա-պագայ կ'ողբան զնոսա և նոցա կը պատկանին։

Դ.

Խրախճանայ ցնծութիւնը նոցա համար կը լռէ. նոցա անունը միայն ա-մէն շրթունքէ կը լսուի. մինչդեռ 'ի պատիւ 'ի յիշատակ սխրալի քաջագոր-ծութեանց նոցա, գաւաթը կը շրջի լռելեայն։

Ե.

Հռչակեալք յամբոխէն որ զա-նոնք ճանչցած չէ և արտասուեալք ի-բենց թշնամիներէն իսկ, որք նոցա վերայ կը հիանան, ով չուզեր նոցա փառաւոր բաղդին մասնակցիլ. ով չուզէր մեռնիլ նոցա ընտրած մահ-ուամբը։

Զ.

Ա յսպէս ահա, կորովիդ Բարքեր, կեանքդ, մահդ և փառքդ պիտի նը-ուիրագործուին։ Քաջաղն երիտա-սարդք քու վրադ պիտի սքանչանան և քու յիշատակդ իրենց օրինակ պի-տի առնուն։

Է.

Բայց կան սրտեր ալ, զորս քու մահդ արիւնած է զորս փառքդ չեն կարող սփոփել, և որք ահիւ և դա-ղութեամբ կը լսեն յաղթութեան մի պատմութիւնը, ուր այնչափ սիրելի, այնչափ քաջասիրտ զորական մը ինկաւ։

Ը.

Մեր թագչին իրենց կսկիծը ամ-քելու համար. երբ պիտի դադրին քու սիրեցեալ անունդ լսել։ Յա-մանակը չկրնար մոռացումն բերել իր հետ, երբ փառքն է որ ճարակ կուտայ վշտին։

Թ.

Բարէ աւելի անունց քան թէ քու վրադ պէտք է ողբան մարդիկ անդադար։ Յիրաւի խիստ դառն է մեռելոց ազդած վիշտը, մանաւանդ երբ ասիկայ անունց պատճառած առա-ջին վիշտն ըլլայ։

Հոկտեմբեր, 1814։ Լորդ Պայրոն։
Թարգմանեցաւ 'Ն. Ռ.։

---

* Այս քաջ սպայն 1814 ին օգոստոսին մե-ռաւ, քսան և ինը տարեկան հասակին, երբ իր Մինէրվաս անուն նաւուն մարդոցը գլուխ կեցած Պալդիմորի քով՝ Ամերիկացւոց բանակին տիրել կը ջանար։ Լորտ Պայրընի հօրեղբօրորդին էր. բայց իրենց տղայութենէն 'ի վեր բնաւ զիրար տեսած չէին։

digitised by A.R.A.R.@